բայց ապարդիւն։ Փառասիրութիւնը կուրացը-
րել էր նրան։

Լինելով Երուսաղէմի պատրիարքութեան
փոխանորդն ու գործակալը, Եղիազարը որոշ
դիրքի հետ միասին, իր տրամադրութեան տակ
ունէր նաեւ յիշեալ վանքի ամբողջ հարստու-
թիւնը՝ իր նպատակին հասնելու համար։ Ու-
սի առնելով իր հետ «առատ ընծաներ» ուղե-
ւորւում է Պոլիս և կաշառելով եպարքոս Բեօի-
բիւլիւ Օղլու Ահմէտ փաշային, ստանում է
նրա հրամանը՝ ամբողջ Տաճկաստանի հայու-
թեան վրայ կաթողիկոսանալու։ Սակայն Պաշա-
տուր կաթողիկոսն էլ, համամիտ լինելով, Հա-
լէպում նրան ձեռնադրում է կաթողիկոս։

Պառակտումն արդէն սկսուած էր։ Այդպի-
սով ո՛չ միայն ամբողջ հայութիւնը բաժանւում
էր երկու հատուածի — պարսկահայ եւ տաճ-
կահայ, այլ եւ ինքը տաճկահայութիւնը բա-
ժանուեց երկու հակառակ բանակի եւ սկսեց
պայքարել իրար դէմ — Էջմիածնականներ եւ
Երուսաղէմականներ, կամ Յակոբեաններ
(Զուղայեցու անունով) եւ Եղիազարեաններ։
Տաճկահայերից շատերը, մանաւորապէս դի-
տակից տարրը, ազգի եւ աթոռի միութիւնը ա-
մէն բանից թանգ դասելով, ժխտում էին Ե-
ղիազարի կաթողիկոսութիւնը եւ ջերմ կողմ-
նակից էին Զուղայեցուն։ Բայց քիչ չէին եւ Ե-
ղիազարի բարեկամները, մանաւանդ որ նա իր
անդրանիկ կոնդակով խոստանում էր ժողո-
վրդին «առնել բազում բարիս եւ ըստ ժամա-
նակին առաքել ի ձեռն նուիրակաց զմիւռոնն
ձրի՝ առանց իրիք նուիրաց եւ տրոց» (Զամ-
չեան, Գ. եր. 670)։

Երեւակայո՞ւմ էք դուք, թէ այս բոլորը
ի՛նչպէս պիտի ազդէին ծերունի հայրապետի
վրայ, որի համար — ինչպէս ասացինք — ազ-
գի խաղաղութիւնը եւ Էջմիածնի աթոռի միու-
թիւնը բարձր էին ամէն բանից։

Ու նա հանդիստը կորցրած՝ բազմաթիւ
դիմումներ է անում, նամակներ է գրում ա-
մէն կողմ, յորդորելով ամէնքին զգուշանալ
պառակտումից եւ «Լուսաւորչի աթոռը բաժա-
նելուց, որը կը լինի դայթակղութիւն շատե-
րին եւ վնաս ազգին»։ Անգամ Եղիազարի մօտ
էլ մարդ է ուղարկում, «զգօնամիտ եւ իմաս-
տուն» Յովհաննէս վարդ. Արզնցուն՝ նրան
զգաստութեան հրաւիրելու համար, սակայն
ապարդիւն...

Գնալով խռովութիւնն աճում էր Հայոց
մէջ, մանաւանդ Կ. Պոլսում։ Ուրիշ հնար
չգտնելով վերացուած խաղաղութիւնը վերա-
հաստատելու տաճկահայոց մէջ, ծերունի կա-
թողիկոսը որոշում է անձամբ գնալ Պոլիս կամ
Երուսաղէմ, յանձն առնելով ճանապարհի բո-
լոր նեղութիւններն ու նիւթական հսկայ ծախ-
սերը։

Բայց դժբախտաբար, Եղիազարին նա եր-
բեք չհանդիպեց ոչ Երուսաղէմում, ոչ էլ Կ.
Պոլսում։ Երբ կաթողիկոսը Երուսաղէմում էր,
Եղիազարն այնտեղ չէր, Պոլսում էր. իսկ երբ
կաթողիկոսը Երուսաղէմից ճանապարհ ընկաւ
դէպի Պոլիս, հէնց Պոլիս հասնելու օրը Եղիա-
զարն էլ Պոլսից նաեւ նստեց եւ մեկնեց դէպի
Երուսաղէմ։

Պոլսում Զուղայեցուն այցելութեան եկան
բոլոր նշանաւոր ազգայինները։ Նրանցից ո-
մանք — ինչպէս օրինակ Ապրօ եւ Երեմիա Չէ-
լէպիները — Եղիազարի կաթողիկոսութեանը
կողմնակից լինելով, սկսեցին համոզել Զու-
ղայեցուն, որ սա հաշտուի Եղիազարի կաթո-
ղիկոսութեան հետ, խոստանալով հաւատա-
րիմ մնալ Էջմիածնին եւ «չօտարանալ Յակոբ-
ի սիրուց»։ Իսկ Զուղայեցին դեղեցիկ կերպով
նրանց համոզում է, որ եթէ ինքը դէմ է Եղիա-
զարի կաթողիկոսութեան, իր մէջ խօսողն անձ-
նական շահը չէ եւ ոչ էլ իշխանասիրութիւնը,
մանաւանդ որ ինքը արդէն ծերացած լինելով,
բոլորովին իրեն փոյթ չէ՝ «չատերի՞ վրայ
կ'իշխի, թէ քչերի», այլ որ կաթողիկոսու-
թեան պառակտումը «անհնարին վնաս է ազգի
համար»։ «Եթէ երկու աթոռից — ակնարկում
է Էջմիածնի եւ Սսի աթոռները. Ի.— ազգն այն-
քան տուժեց, երեք աթոռից կոիւն ու վէճը այլ
եւս վերջ չպիտի ունենան» — աւելացնում է
նա։

Եւ կաթողիկոսի պատճառաբանութիւնից
համոզուելով, մանաւանդ տեսնելով «զքաղցր
բարս եւ զառաքինազարդ քաղաքավարութիւն
նորա, որում չէին այնչափ տեղեակ յառաջնո-
մէ», Եղիազարի բարեկամներից շատերն ան-
ցան Զուղայեցու կողմը, խոստանալով նրան
իրենց նիւթական ու բարոյական աջակցութիւ-